

բեան զար բաժնուած զանազան զասա-
կարգերու և յառաջադիմութեան կենդա-
նական և բուսական թագաւորութեան և
հանածոյից առատովիթեան:

Մեր տկար զատողութեամբ, կը թուի որ
մեր Արքազածն և Մասիսն, Հայաստանի
բարձրաւանդակովն, այս զարուն երր ծո-
վերու ջրերն զեռ համապարփակ ծաճկէին
հողագունզու, սկսան բարձրանալ ծովի մա-
կերեւոյթէն վեր և կազմեր են հսկայ
մի կզզի, ընդ նմին և ի նոյն ժամանա-
կի բարձրացել են մեր մօտիկ կովկա-
սեան լեռնաշղթայն և Պարսկաստանի մեզի
սահմանակից լեռներն, կեղրոն ունենալով
քան զՄասիս բարձր Մաւալան լեռն: Մինչ-
դեռ մեր հարեւան երկիրներ զեռ ջրի տակի
էին, հրւասիչն Ռուսաստանն մինչեւ Ռւ-
սալեան լեռնաշղթան, Պարսկաստանի հիւ-
սիսային և հարաւային կողմն Միջազետք
և Փոքր Ասիսյ մի մասն:

Սոցա առաջին լեռներն են մեր երկրի
կեղրոնի վրայ, զուտ հրաբխային ժայռերէ
և հրաբխային պատառաւածներէ կազ-
մուած, ներքին ոյժն կողապատառ ա-
նելով նախկին ժայռերն ուրիշ հրածին
նիւթերու խառնուրզով նոր շերտեր աւե-
լացնելով առաջինների վրայ: Դիտութեան
անդունիք բրեանը հասած, կանգ առնենց
միայն Արագածու վրայ խորհրդածելու,
մեր տեսած բաները ներկայացնելով, որով
յուսամ մօտեցած լինենք արդարացնելու
մեր կարծիքն թէ Արքազածն Միլուրեան
ժամանակի զործ է. ուստի նախնական
անդրանիկ լեռներուց այն երկիրն՝ յորում
Ս. Գիրը երկրաւոր դրախտն պիտի զնեն,
հակառակ շարք մը զիւնականներու և
թութակներու, որոնք տպայամութիւն հա-
մարին հին իմաստութեան և մեզի թողած
թանկագին զանձերն: Մինց պէտք է սե-
փականնեց և այսու պարծենանք, հակա-
ռակորդներն գրաւոր և պատմական փաստ
չունին բաց ի ինքնաշնչուումէ: Մինչ ճշշ-
մարիտ գիտութիւնը համաձայն ընթանում
է Ս. Գրքին հետ:

Հ. Գ. ՆԱԽԱԵՏԱՆ

Գ. Ի. Ա. Կ. Ա. Ն.

ՄԱՐԻԱ ՍՅԵԼԼԱ

ՎԵՐՋԱԲԱՆ ՀԻՆ ՃԵՐԻԱԾՈՒՄԻ ՄԸ

(Ամտառիմ մէջ քաջացող գեղուհին)

Այստափին վարդ ու բարեխաստ գեղուհին
Զարկաւ ձեռքիրը և կանչեց. — Բերենիկ,
Ազամանդիկ, Մաղկի, Էլուա, Դայելիկ,
Շուտ թգիտաներս ու գուլպաներս թեր ինծի:

Ուր է իմ պերճ կամարըս զուս ոսկիէ.
Ես սամոյերէ քնադ բանկոս մը կ'ուզեմ,
Այս միւս որդան կարմիրը, ոչ թէ կապոյտն:
Եւ մոր են իմ ազգականերըս սիրուն:

Մեր հայրն ելաւ քունէն: (Մաղիկ, կոճկէ հոս):
Որսին եղիւըը չեմ լըսեր, այս ժամուն
հնապէս կ'ըլլայ որ գեռ ամէնքը պառկին:
Ո՞ն, ասէ վեր անտառն ինչ իմս կ'երեւայ:

Ու դուք, դուք միշտ իմ ծուռնկերուս առջնեւ էք,
Եշխան, եւ ինձ կը նայիք պիշ այն աշով,
Որոյ կարծեն թէ պիո՞ւ արցունք մը ժայթիք:
Իմ երացիս փեսան, ես ձեզ կը ճանչնամ:

Եւ ձեր դոդէն սիրուս անա կը դողայ...
Ո՞ն, սաք ելքը, սաք ելք իմ քաղցրը տէրս,
կամ պիտի մաս մնձ քաղցրութեան մէջ շինուա-
թրազին մէջ արդ իսկ մասնի զըրած հարսն:

— Աղուոր, ձեր ձայնն հնուռէն ինձ կը հասնի,
Եւ սակայն ես բռներ եմ ձեր ձեռքիրէն: —
— Ինչ զիւթութիւն է այս, ովք իմ թագաւորս,
Եթէ նորէն ննջնմ՝ զարթնուկ կը բազմամ:

Ո՞վ քերաւ ձեզ այս ճամբաները զապանի:
Քանի՞ փարսան ըրիք, ձերմակ ունք դէմք
կըսաւիք պէս: Ըսէք, ըսէք. Գոփիմտն էք,
Թողը մեր սուրբ թագաւորին, արդ իսկ, արդ

Վերադարձած դէպ ի քաղաքը Բարիք:
Գութ որ Թուրքին դէմ շուշաներն յաղթական
լուգուիկոսի անունով... ինչ ունիք գութ.
Արցունիքի մէջ ժըպիտ մ'ահա կը պաղկի: —

— Աղուոր, Աղուոր, ձեզ կ'ունկնդրէմ ընկզմած:
Մնած է հինգ հարիւր տարի է լուգուիկ:
Եւ շուշաներն արիւերանք կը քերեմ,
Մանզան արդէն իսկ կը հնձէ մարգին մէջ:

Ֆրանսայի մեր զիշերներուն մէջ կապոյտ
կը հրոսէին Անվարտիներ, հրձիգներ։
Նողը Տամի շուրջը գունդ գունդ կը հոսի.
Ի՞նչ բան. — Արին. — Արին... ո՞վ գեր սիրելի,

կը մեռնիմ: Ո՞ւր է հայրըս, մւր եղբայրներս: —
— Աւտակոմքի շրիմթներուն մէջ ներմակ
կը քընանան հանդարտ: — Ու զեր ըսպիտակ
ցեղան մազերս... — Քընացաք, իմ սիրելիս,

Միշտ քընացաք: Համբոյրըս ձեզ արթնցուց: —
— Եւ զարդարուած եմ ես ինչպէս հանդէսի.
Հարսանեկան քօղը զինուո վրայ ունիմ.

Զիս մուրցուց սիրոյ գեղն, արդ կը յիշնմ:

Քաղցըր սիրոյ գեղն: Աւելի քաղցը՝ երազն.
Աւելի քաղցը համբոյրն որ զիս կ'արթնցնէ:
Զերինն էին այս լրիտները սիրուն: Էք: Բայց ո՞վ էք դուք: Ո՞չ, գուք, այս, Սպասուածն

Դուք էք անի՞ որ երազներ հետի առած
իրիկուան ոչի՞ ճամբար ելաւ: Երջեցաւ
Յիմարութեան դղեակներուն մէջ մոլոր...
Անունը ի՞նչ կ'արժէ: Սպասուածը դուք էք: —

— Ազուրը, Ազուրը, երազներու նկերութեամբ
Այս իրկունն ելայ ճամբար. շրջեցայ
Յիմարութեան դղեակներուն մէջ մոլոր:
Եւ զիս իրբեւ քող մը ձենէ կը բաժնէ

ԺԱԱԱԱԱԿԱՆ: Ո՞չ, ի՞նչպէս այս մեծ խօշիւնէն
Նախճիրներու, այս կախարդիչ անստուէն
Պիստի կրնամ ձեզ անցընել, քաղցը իմ սէր:
Մերթ անհամեր կ'այրիմ ես, մերթ կը սարիմ:

Ի՞նչպէս պիստ տանիմ ես ձեր այրուձին
Որ չերեւայ դիմակաւոր խումբ մ'յիմար.
Հոն մինչևս իմ տունըս թողուած ու լքուած,
Ուր որ Ռուսոյ կը կարդան իմ եղբայրներս: —

— Եւ արդ ուրեմն, հոն կեցէր, իմ սիրելիս:
Երազեցէր հոս այս ոսկի մաճճին վրայ:
Ողջերը թող զիրար ձրձնն ցըցըտէն,
Եղէք, ու ես ձեր քով պիտի երկնամ: —

— Ազուրը, Ազուրը, այս, քնանանք, երազենք:
Դուք արեւմուաք չունիք. ես ձեզ կը սիրեմ:
Թող ճիւղ ճիւղի վըրայ զոցուի վըրանիս
Անտառն, ու թող օքը սահի անվախան: —

Ալսպէս անոնք ուրախ զըւարթ քընացան:
Եւ անոնց շուրջը ծաղիկներն անցին
Ու մատուներն, եւ բոյրերով թոյներով
Ահաւասիկ լցուեցաւ դրախտոց կանանչ:

Թրգմ. Հ. Ա. Ղազիկնեաւ

ՈՒԽՏԱԿՈՐՆԵՐԸ

(Ծ: Ծ)

Ուխտաւորներ էին անոնք:

Նստած վանքի «վեհարան» յի լայնչի
պատուհաններէն մէկուն մէջ կը դիտէի
անոնց մուտքն ու անցըը շարան շարան: Մանուկ, պապօր, պատանի, երիտասարդ,
կոյս, նորհարս, ծեր ու պառաւ, մէկ խօս-
քով՝ Մշոյ շինականը տարիցի ու սեռի
իր բոլոր ներկայացուցիչներով, վանք կը
թափէին, կտարակելու համար Ս. Վարա-
գայ ոտն և ուխտ:

Ո՛վստ ունչին բոլորն աւ:

Ուխտերնին կատար:

Ի՞նչ ուխտ կենային ունենաւ, սակայն,
այդ պարզմիտ զեղչուկները, որոնք կ'ը-
սես իրենց նախշուն ու զոյնզոյն շորերն
էին եկեր ցուցազբեկ Մուրատատուրի մնձ
բակին մէջ, Ռիխտի օր մը հրաշալիք է:
Ի՞նչքան զուարթ են դէմքերը, հակառակ
այն ցափ ստուերին՝ որով ցօղարկուած
են անոնք և ուսկից աւելի դիւթական շր-
նորհ մը կ'արտափայլի: Փոհունակ նայ-
ուածքներ՝ ուր բարեպաշտիկ սրտի մը խա-
ղաղութիւնը կը ծովանայ: Անհամբերու-
թին մը սակայն կը խլոտի ընդհանուր
արտայատութեան մէջ՝ որ խտացումն է
անոնց հոգեկան յուզումներուն ու տագ-
նապնդներուն: Մըրերու համազութենչն ծը-
նած ներդաշնակովթիւնն է այն: Հազար
շեշտեր, հազար զիծեր այն հազար աշ-
քերուն մէջ՝ ուր Ցեղը իր ժամտի հազար
եղանակաւորումներն ունի: Աստուած մի-
այն կրնայ կարդալ անթերի ի՞նչ որ այդ
վիշտերն ու զիեները կը զին անանոն
տառերով: Աստուածոյ սուկէմատեանը, ով
կրնայ վերլուծել զայն:

Բայց զուարճալի էք զանոնք զիտելը:

Կը տեսնէի բնազդական շարժուձեւերը
պզտիկներուն՝ որ անշուշտ անցեալ տար-
ուայ խաղ ու պարերու վեցյիշումներով
էին խանդակառա: Ունչին անոնք ալ ի-
րենց ուխտերը, այդ փոքրիկ սրտերը, այդ
շրացուած կոկոնները:

«Մոմ պիտի վառեմ, մոմ, մուրատա-

